



European Union  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ»  
Եվրոպական իրավունքի դատախաղ-մրցույթ



**ՕՆԻԿ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆՆ**

**ընդդեմ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Գործը**

**Քննվում է Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի Կողմից**

**ԴԱՏԱԿԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ**

**բացառապես**

**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ»**

**Եվրոպական իրավունքի 2007-2008թթ. դատախաղ-մրցույթի դատավորների համար**

Երևան 2007թ.

**Հուլիանոսի բովանդակությունը խիստ զաղտնի է.**

**Այն մշակվել է բացառապես «Ինտերակտիվ մարդու իրավունքներ»**

**Եվրոպական իրավունքի 2007-2008թթ. դատախաղ-մրցույթի դատավորների ծանոթացման համար.**

Սույն Դատական հուշագիրը մշակվել է ԵՆ կրթական հասարակական կազմակերպության, Իրավական ուղեցույց եւ «Զարգացման սկզբունքներ» հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2007-2008 թվականների դատախաղ-մրցույթի ծրագրի շրջանակներում: 2007-2008 թվականների Մրցույթի իրականացմանը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում Եվրոպական Միությունը՝ «Ժողովրդավարության և մարդու իրավունքների եվրոպական նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում:

Սույն փաստաթղթում արժարժված տեսակետները մշակվել են. հիմք ընդունելով «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2007-2008 թվականների դատախաղ-մրցույթի դատական գործի փաստերը, մրցույթի նպատակներն ու խնդիրները: Սույն դատական հուշագրում ներառված ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել որպես կոնկրետ դեպքերի համար իրավաբանական խորհրդատվություն: Սույն Դատական հուշագիրը և դրանում ներառված ցանկացած մեկնաբանություն ունի բացառապես կրթական նպատակ:

Երևան, 2007թ. Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I -- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	4
1. Ներածություն .....	4
2. Մրցույթում որպես դատավոր հանդես գալու իրավունքը .....	5
3. Դատավորների կազմը .....	5
4. Բանավոր փաստարկների ներկայացման համար թիմերին հատկացված ժամանակը և դատավորների հայեցողությամբ հատկացված ժամանակի ավելացումը.....	7
5. Ընդհանուր դրույթներ տույժերի կիրառման եւ դրանց առանձնահատկությունների մասին.....	8
ՄԱՍ II. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ .....	9
1. Արդար դատաքննության իրավունքը .....	9
2. Արդար դատաքննության իրավունքն ու սեփականության պաշտպանության իրավունքը .....	11
2.1. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիությունը կատարողական վարույթների նկատմամբ ու հիմնական չափանիշները .....	12
2.2. Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը ու հիմնական չափանիշները .....	13
2.3. Պետությունների վրա դրված պոզիտիվ պարտավորությունները թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում .....	14
3. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք .....	14
ՄԱՍ III. ԿՈՂՄԵՐԻ ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	16

# ՄԱՍ I -- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## 1. Ներածություն

Սույն Դատական Յուրազգի (այսուհետ «Յուրազգի») նպատակն է «Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի 2007-2008 թվականների դատախաղ-մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) դատավորներին ծանոթացնել մրցույթի դատական գործի մանրամասներին (այսուհետ՝ «Գործ») կամ «Դատական Գործ»), Գործին վերաբերող փաստերին և իրավական հիմնախնդիրներին: Յուրազգի հետ մեկտեղ Դատավորներին կտրամադրվի նաև Դատական գործն ու «Եվրոպական իրավունքի դատախաղ մրցույթի Դատական գործի վերաբերյալ պարզաբանումներն ու ուղղումները»: «Եվրոպական իրավունքի դատախաղ մրցույթի Դատական գործի (այսուհետ՝ «Պարզաբանումներ և ուղղումներ») նպատակն է հստակություն մտցնել Դատական գործում ներառված այն հարցերում, որոնք Մրցույթի իրականացման նախնական փուլում վեր են հանվում Մրցույթի մասնակիցների կողմից: Պարզաբանումներն ու ուղղումները չեն անդրադառնում այն հարցերին, որոնք կմեկնաբանեն կամ կհստակեցնեն դատական գործում ամրագրված այն փաստերն ու իրադարձությունները, որոնց կապակցությամբ իրավական մեկնաբանություններ և լուծումներ տալը Մրցույթի մասնակից թիմերին առաջադրված խնդիրն է: Պարզաբանումներն ու ուղղումները հանդիսանում են Դատական գործի անբաժանելի մասն ու դրանք անհրաժեշտ է դիտարկել միասին:

«Ինտերակտիվ մարդու իրավունքներ» Եվրոպական իրավունքի դատախաղ-մրցույթի կազմակերպիչն է «Երիտասարդական նվաճումներ» կրթական հասարակական կազմակերպությունը՝ «Իրավական ուղեցույց» եւ «Զարգացման սկզբունքներ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ:

**Սույն Յուրազգի բովանդակությունը խիստ գաղտնի է և այն նախատեսված է միայն Մրցույթի դատավորների համար: Սույն Յուրազգի փոխանցումը Մրցույթի մասնակից թիմերին արգելվում է: Այս պահանջը խախտող թիմը կամ թիմի անդամը կենթարկվի Մրցույթի Պաշտոնական կանոններով նախատեսված տույժի:**

Մրցույթը բաղկացած է երկու մակարդակից՝ Գրավոր մրցափուլ և Բանավոր մրցափուլ: Բոլոր մրցափուլերը կընթանան Մրցույթի Պաշտոնական կանոնների և Պաշտոնական ժամանակացույցի համաձայն: Գրավոր մրցափուլը բաղկացած է Գրավոր փաստարկների, իսկ Բանավոր մրցափուլը՝ Բանավոր փաստարկների ներկայացումից և գնահատումից: Մրցույթի ժամանակ ապահովվում է մասնակից թիմերի ինքնուրույն գաղտնիությունը: Մրցույթի բոլոր մակարդակներում կիրառվող միակ պաշտոնական լեզուն հայերենն է:

Դատական գործը մտացածին է և վերաբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված մի շարք իրավունքների, այդ թվում արդար դատաքննության իրավունքի, մասնավորապես կողմերի հավասարության սկզբունքի, սեփականության պաշտպանության իրավունքի, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի ենթադրյալ խախտումներին: Դատական գործով պատասխանող մասնակից պետությունը **Չայաստանի Չանրապետությունն է և Գործի նկատմամբ կիրառվում է Չայաստանի Չանրապետությունում մինչև 2006 թվականի ապրիլի 30-ը գործող օրենսդրությունը:** Դատական գործը լսվելու է Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանում՝ (այսուհետ՝ «Դատարան») կամ «Եվրոպական դատարան») Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ «Եվրոպական կոնվենցիա») կամ «Կոնվենցիա») և Դատարանի Կանոնակարգի համաձայն: Դատական գործում ներառված իրավական հիմնախնդիրները ներկայացված են այնպես, որ մրցույթի մասնակիցներին հնարավորություն տրվի անհրաժեշտ փաստարկներ ներկայացնել մի կողմից Դիմումատուի, մյուս կողմից Պատասխանող

մասնակից պետության դիրքորոշումն հիմնավորող իրավական համապատասխան դրույթների վերաբերյալ՝ դրանք մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի դրույթների և Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների համապատասխան:

## ***2. Մրցույթում որպես դատավոր հանդես գալու իրավունքը***

Մրցույթում որպես դատավոր հանդես գալու իրավունքի, դատավորների կազմի վերաբերյալ հարցերն ու մրցույթի գնահատման կարգն ու եղանակները սահմանված են Մրցույթի Պաշտոնական կանոններով: Սույն Հուշագիրը կանդրադառնա վերը նշված հարցերի համառոտ նկարագրին՝ դատավորներին Մրցույթի իրականացման ընդհանուր կարգին և կանոններին ծանոթացնելու նպատակով:

Դատախազը հնարավորինս մոտեցված կլինի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից իրականացվող իրական դատավարության կանոններին և ընթացակարգին: Դատավորները կկրեն համապատասխան հանդերձանք, կպահպանվի դատարանում ընդունված վարվելակարգը: Ի լրացումն վերը նշվածին, Մրցույթի իրականացման ընթացքում դատավորներն ու մասնակից թիմերը պետք է նաև առաջնորդվեն Մրցույթի Պաշտոնական կանոններով, սույն Հուշագրով, Մրցույթի Պաշտոնական ժամանակացույցով:

Մրցույթի ցանկացած փուլում և մակարդակում բացառվում է որևէ դատավորի մասնակցությունը Մրցույթին, ով կապ ունի այն ԲՈՒՀ-ի հետ, որը թիմ է ներկայացրել 2007-2008 թվականների Մրցույթում մասնակցելու համար, ծանոթ է կամ այլ կերպ հարաբերվում է վերջինիս հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է Պաշտոնական կանոններով և թույլատրվում է Մրցույթի նախագահի կողմից: Դատավորի՝ տվյալ ԲՈՒՀ-ի շրջանավարտը լինելու փաստը չի կարող հիմք հանդիսանալ վերջինիս, որպես դատավորի մասնակցությունը Մրցույթին խախտում որակելու համար:

Դատավորները պետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն տվյալ թիմի բանավոր ելույթը գնահատելուց, եթե նրանք անձնական կամ մասնագիտական հարաբերություններ կամ կապ ունեն տվյալ ԲՈՒՀ-ի կամ տվյալ թիմի որևէ անդամի հետ և եթե այդ կապը կարող է ազդել նրանց անկողմնակալության կամ անաչառության վրա կամ ավելորդ անճշտությունների տեղիք տալ: Դատավորները չպետք է իրենց նախաձեռնությամբ հրաժարվեն մրցափուլին մասնակցելուց՝ տվյալ թիմի անդամին պարզապես ծանոթ լինելու կամ տվյալ ԲՈՒՀ-ի հետ որոշակի հարաբերություններ ունենալու դեպքում:

## ***3. Դատավորների կազմը***

Մրցույթի Գրավոր մրցափուլը կանցկացվի երկու, իսկ Բանավոր մրցափուլը՝ երեք դատավորների կազմով, բացառությամբ բանավոր մրցափուլի եզրափակիչ փուլի, որը կանցկացվի հինգ դատավորների կազմով: Բացառիկ դեպքերում Մրցույթի նախագահը կարող է թույլ տալ երկու դատավորի կազմով Բանավոր մրցափուլի, բացառությամբ եզրափակիչ փուլի, իրականացումը: Մրցույթի ոչ մի փուլում որևէ բուհի կամ ֆակուլտետի խորհրդատու, մարզիչ իրավունք չունի հանդես գալ որպես դատավոր: Հնարավորինս պետք է բացառվի թիմի կրկնակի քննումը միևնույն դատավորի կողմից: Եթե որևէ դատավոր ստիպված է նույն թիմի ելույթը երկու անգամ գնահատել, ապա Մրցույթի կազմակերպիչը պետք է ապահովի, որ այդ թիմը հանդես գա տարբեր կողմերից (Դիմումատու/ Պատասխանող մասնակից պետություն):

Եզրափակիչ կամ կիսաեզրափակիչ մրցափուլերում Մրցույթի նախագահը կարող է դատավորներին թույլ տալ գնահատել մեկ կամ մեկից ավելի թիմերի, որոնց նրանք նախկինում դատել են՝ ելնելով այն հանգամանքից, որ դա կնպաստի Մրցույթի շահերին:

Յուրաքանչյուր մրցափուլում դատավորները պետք է միմյանցից անկախ ստուգեն (յուրաքանչյուր դատավորի կտրամադրվի անհատական գնահատման թերթիկ, որտեղ դատավորը կնշի թիմի անդամների ելույթների գնահատականները՝ հիմք ընդունելով սեփական համոզմունքներն ու անձնական մասնագիտական գնահատականը) թիմերի Գրավոր փաստարկները և գնահատեն բանավոր ելույթները: **Դատավորները մասնակից թիմերի ելույթները գնահատելիս պետք է առաջնորդվեն հետևյալ սկզբունքներով.**

- Դատավորները մասնակից թիմերի ելույթները գնահատելիս պետք է գնահատեն մասնակից թիմերի այն բանախոսների անհատական ելույթները, որոնք տվյալ մրցափուլում հանդես են գալիս ելույթով և ներկայացնում են համապատասխան փաստարկներ: Դատավորները իրավասու չեն ընդհանուր մոտեցում ցուցաբերել թիմերին՝ առանց հաշվի առնելու թիմերի ներկայացուցիչների կողմից ներկայացված անհատական փաստարկների որակն ու իրավական հիմնավորվածությունը:
- Դատավորները՝ մասնակից թիմերի ներկայացուցիչների ելույթները գնահատելիս պետք է իրավական գնահատական տան Մրցույթի Դատական գործի լուծման կապակցությամբ թիմի դիրքորոշմանը և ներկայացրած փաստարկներին:
- Դատավորները թիմերի ելույթները գնահատելիս պետք է հաշվի առնեն թիմերի կողմից ներկայացված փաստարկների հիմնավորվածությունը, հետևողականությունը և Եվրոպական կոնվենցիայի նորմերին և Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներին համապատասխան մեկնաբանումը: Դատավորները գնահատելիս պետք է հիմնվեն Մրցույթի Դատական գործի վերաբերյալ Կոնվենցիայով սահմանված նորմերի և սկզբունքների համապատասխան լուծումներ տալու՝ թիմերի դրսևորած հմտությունների և կարողությունների վրա:
- Համաձայն Մրցույթի դատական գործի և Պաշտոնական կանոնների՝ Մրցույթի մասնակիցները պետք է անդրադառնան բացառապես Մրցույթի Դատական գործում ներկայացված փաստերին և Գործի V գլխում սահմանված հարցերին: Դատավորները՝ թիմերին հարցադրումներ կատարելիս և նրանց ելույթը գնահատելիս պետք է հիմք ընդունեն Մրցույթի Դատական գործի V գլխում սահմանված հարցերն ու Դատական գործում արծարծված փաստերն ու հանգամանքները: Ո՛չ մրցույթի մասնակիցները, ո՛չ էլ դատավորները իրավասու չեն նեղացնելու կամ լայնացնելու նշված հարցերի շրջանակը: Թիմի մասնակցի կողմից նշված պահանջը խախտելու, ինչպես նաև Դատական գործի փաստերն աղավաղելու դեպքում դատավորը իրավասու է միջամտել նրա ելույթին և պահանջել անդրադառնալու բացառապես Մրցույթի Դատական գործի V գլխում սահմանված հարցերին և գործի փաստերին: Թիմի մասնակիցները՝ դատավորի կողմից Մրցույթի Դատական գործի V գլխում սահմանված հարցերից և Դատական գործի փաստերից տարբերվող հարցադրումներ անելու դեպքում իրավասու են չանդրադառնալ դրանց՝ այդ մասին դատավորին բանավոր ձևով հայտնելու պայմանով:
- Մրցափուլի ավարտից հետո Դատավորները իրավասու չեն թիմերին տեղեկացնելու իրենց անհատական կարծիքի կամ թիմի հավաքած ընդհանուր միավորների մասին, ինչպես նաև իրավասու չեն տարածելու այնպիսի տեղեկատվություն, որը կմատնանշի նրանց անհատական դիրքորոշումը և կպարզաբանի սույն Հուշագրի բովանդակությունը: Բացառություն են կազմում Մրցույթի կիսաեզրափակիչ և եզրափակիչ փուլերը, երբ մրցափուլերի վերջում դատավորները հրապարակավ մեկնաբանություններ և առաջարկություններ պետք է անեն թիմերին և կարծիքներ հայտնեն թիմերի բանավոր ելույթների վերաբերյալ, սակայն իրավունք չունեն հրապարակավ հայտնել թիմերի արդյունքները: Բանավոր մրցափուլի նախընտրական, քառորդ եզրափակիչ և կիսաեզրափակիչ մակարդակներում դատավորները չպետք է տեղեկացվեն նախորդ փուլերում թիմերի հավաքած հանրագումարային միավորների մասին: Նրանց կողմից թիմերի գնահատումը պետք է անկախ լինի նախնական փուլերում թիմերի դրսևորած արդյունքներից: Այս առումով եզրափակիչ մրցափուլը տարբերվում է նախորդ

մրցափուլերից: Եզրափակիչ մրցափուլում հանդես եկող թիմերի հանրագումարային միավորների թերթիկները կտրամադրվեն դատավորներին՝ իրենց հայեցողությամբ դրանք օգտագործելու համար: Տվյալ փուլի հաղթողի վերաբերյալ որոշումը կայացվում է գնահատող դատավորների ձայների մեծամասնությամբ: Փուլային միավորների թերթիկները լրացնելուց հետո կանցկացվի թիմերի բանավոր ելույթների հրապարակավ գնահատում: Բանավոր մրցափուլի նախընտրական, քառորդ եզրափակիչ և կիսաեզրափակիչ մակարդակներում առկա է ևս մեկ տարբերություն եզրափակիչ փուլից: Տարբերությունը կայանում է նրանում, որ դատավորները Բանավոր մրցափուլի նախընտրական, քառորդ եզրափակիչ և կիսաեզրափակիչ մակարդակներում գնահատում են յուրաքանչյուր բանախոսի ելույթը առանձին առանձին վերցրած, իսկ եզրափակիչ մրցափուլում դատավորները հաղթող թիմի վերաբերյալ որոշում են կայացնում ձայների մեծամասնությամբ:

- Չի խրախուսվում թիմերի անդամներին զուտ տեսական բնույթի հարցեր տալ ինչպես Եվրոպական կոնվենցիայի, այնպես էլ ազգային օրենսդրության վերաբերյալ: Թիմերի անդամների տեսական գիտելիքների իմացությունը խրախուսվում է ստուգել Կոնվենցիայի կամ ՀՀ օրենսդրության նորմերի միջև համեմատական վերլուծություն ենթադրող հարցադրումների միջոցով: Մրցույթը պետք է հնարավորինս նմանվի իրական դատարանի դահլիճի, որպեսզի առավելագույնս ապահովի մրցույթի մասնակիցների փորձի ձեռքբերումը:
- Չի խրախուսվում դատավորի կողմից հարցերի կենտրոնացումը թիմի մեկ մասնակցի կամ մեկ թիմի վրա: Մրցույթի հիմնական նպատակներից մեկն է թիմերին հավասար հնարավորություններ ընձեռել իրենց կարողություններն ու հետազոտությունների արդյունքները ներկայացնել դատարանին:
- Դատավորներին խորհուրդ է տրվում հարցերը պարզ ձևակերպել և խուսափել մեկնաբանություններ անել թիմի անդամի կողմից ներկայացված պատասխանի կապակցությամբ:
- Դատավորներին խորհուրդ է տրվում մասնակից թիմերին խնդրել բացատրել իր և հակառակորդի տեսակետների միջև առկա ակնհայտ հակասությունները կամ տարբերությունները՝ Եվրոպական կոնվենցիայի նորմերի և Եվրոպական դատարանի կողմից մշակված չափանիշների համապատասխան:
- Մասնակից թիմերի կողմից թույլ իրավական փաստարկներ ներկայացնելը դատավորը չպետք է օգտագործի մրցույթի մասնակցի դեմ: Մյուս կողմից, եթե մասնակիցը սխալ է ձևակերպում օրենքը կամ սխալ է ներկայացնում որոշումը, կամ տեղյակ չէ կիրառելի նորմին, դատավորը պետք է դա մասնակցի ուշադրությանը ներկայացնի հարցերի միջոցով:

**4. Բանավոր փաստարկների ներկայացման համար թիմերին հատկացված ժամանակը և դատավորների հայեցողությամբ հատկացված ժամանակի ավելացումը**

Դատավորները թիմերի ելույթները գնահատելիս պետք է հիմք ընդունեն Պաշտոնական կանոններով սահմանված ժամանակն ու մրցափուլի անցկացման կարգը: Համաձայն այդ ընթացակարգի թիմերը իրենց ելույթները ներկայացնում են հետևյալ հերթականությամբ.

<i>Բանավոր փաստարկների հերթականությունը</i>	<i>ներկայացման կարգն ու</i>	<i>Թույլատրելի առավելագույն ժամանակը</i>
---	-----------------------------	--

1. Դիմումատուին ներկայացնող թիմի առաջին բանախոս	20 րոպե
---	---------

2. Դիմումատուին ներկայացնող թիմի երկրորդ բանախոս	20 թույլ
3. Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմի առաջին բանախոս	20 թույլ
4. Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմի երկրորդ բանախոս	20 թույլ
5. Դիմումատուին ներկայացնող թիմի առաջին կամ երկրորդ բանախոս (պնդումների ներկայացում)	10 թույլ
6. Պատասխանող մասնակից պետությունը ներկայացնող թիմի առաջին կամ երկրորդ բանախոս (առարկությունների ներկայացում)	10 թույլ

Պատավորները կարող են իրենց հայեցողությամբ տաս (10) թույլով երկարացնել յուրաքանչյուր թիմի ընդհանուր բանավոր ելույթի համար հատկացված հիսուն (50) թույլ ժամանակը: Սակայն պետք է հաշվի առնել, որ Պաշտոնական կանոնները բացառում են յուրաքանչյուր բանախոսի՝ 30 թույլից ավել ելույթ ունենալու իրավունքը:

Հաշվի առնելով Սրցույթի սկզբունքները և Սրցույթի մասնակից թիմերի շահերը, այն է՝ հավասար ժամանակի առկայությունը յուրաքանչյուր թիմի կողմից իրենց բանավոր փաստարկները ներկայացնելու համար, դատավորները պետք է Պաշտոնական կանոնների համաձայն բոլոր թիմերին հավասար ժամանակ ընձեռեն իրենց փաստարկները ներկայացնելու համար:

Սրցույթի կանոնների համաձայն թիմերին հատկացված է սահմանափակ ժամանակ իրենց փաստարկները ներկայացնելու համար և այդ իսկ նկատառումով էլ դատավորներին խորհուրդ է տրվում խուսափել երկար հարցադրումներից այն դեպքում, երբ մասնակցին հատկացված ժամանակն արդեն մոտ է սպառվելուն:

## ***5. Ընդհանուր դրույթներ տույժերի կիրառման և դրանց առանձնահատկությունների մասին***

- Թիմերի անդամների ելույթները գնահատելիս դատավորներն իրավունք չունեն տույժեր կիրառել՝ նվազեցնելով բանախոսների միավորները: Տույժերը միավորներից կարող է հանել միայն ԵՆ-ն՝ մրցափուլի արդյունքների ամփոփման ժամանակ:
- Դատավորների կողմից «այո» կամ «ոչ» պատասխան ակնկալող հարցադրումները խրախուսվում են: Նման հարցերի միջոցով դատավորները կարող են որոշել մասնակից թիմերի կողմից կատարված հետազոտության խորությունն ու հստակությունը կոնկրետ հարցի լուծման կապակցությամբ:
- Եվրոպական կոնվենցիան, Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռները և Հայաստանի Հանրապետության կողմից կատարված միջամտության համապատասխանությունը Կոնվենցիայի նորմերին այն հիմնական հարցերն են, որոնց պետք է անդրադառնան մասնակից թիմերը: Այս առումով խրախուսվում է, որպեսզի դատավորը ուսանողներին հնարավորություն չտա դեկլարատիվ բնույթի հայտարարություններ անել որոշակի նորմի խախտման կապակցությամբ, այլ թիմերից ակնկալել վիճարկվող ցանկացած նորմի խախտում ուղղակիորեն համադրել Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռներում մշակված չափանիշների և ստանդարտների հետ:

## ՄԱՍ II. ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Այս մասն անհրաժեշտ է դիտարկել Մրցույթի դատական գործի հետ մեկտեղ, որը Ձեզ կտրամադրվի սույն Հուշագրին կից:

«Իրավական վերլուծություն» մասի նպատակն է ներկայացնել Դատական գործի V գլխում ներառված հարցերի կապակցությամբ Եվրոպական դատարանի կողմից մշակված ընդհանուր սկզբունքներն ու այն չափանիշները, որոնցով Դատարանն առաջնորդվում է նման հարցեր բարձրացնող գործերի կապակցությամբ վճիռ կայացնելիս: «Իրավական վերլուծություն» մասը բաժանված է երեք հիմնական բաժինների. արդար դատաքննության իրավունքին, արդար դատաքննության և սեփականության պաշտպանության իրավունքներին և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքին:

### 1. Արդար դատաքննության իրավունքը

Հոդված 6-- Արդար դատաքննության իրավունք

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է՝

*1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դրնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:...*

Ինչպես նշված է Կոնվենցիայի 6-րդ հոդված 1-ին կետում՝ այն յուրաքանչյուրի համար երաշխավորում է արդար դատաքննություն իրավունք երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացվել է քրեական մեղադրանք: Եվրոպական դատարանն իր նախադեպերում այս հոդվածին տվել է լայն մեկնաբանություն՝ նշելով, որ այն ունի հույժ կարևորություն ժողովրդավարական հասարակության համար:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի միայն 1-ին կետն է, որ տարածվում է ինչպես քաղաքացիական այնպես էլ քրեական գործերի վրա: 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը տարածվում են միայն քրեական գործերի վրա: Հոդվածի ձևակերպումից պարզ է դառնում, որ այն չի վերաբերվում այն բոլոր քաղաքացիական գործերին, որոնցում քաղաքացին կարող է կողմ լինել, այլ վերաբերվում է միայն այն գործերին՝ որոնցում որոշվում են մարդու «քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները»: Այս առումով կարևոր է հասկանալ թե «քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ» արտահայտությունը ինչ է նշանակում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով:

Նախ հարկավոր է նշել, որ Դատարանը սահմանել է, որ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ դրույթը ինքնուրույն է և չի կարող մեկնաբանվել միայն ներպետական օրենսդրությանը հղում կատարելով:<sup>1</sup> Այնուամենայնիվ, Դատարանը մինչ այժմ

<sup>1</sup> Stj'u Ringeisen v Austria գործով Եվրոպական դատարանի վճիռը, հուլիս 16, 1971, կետ 94:

խուսափել է տալ «քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ» հասկացության որևէ սահմանում՝ նախընտրելով վճիռ կայացնել յուրաքանչյուր առանձին գործի հանգամանքները հաշվի առնելով:

Զնայած այս հանգամանքին, այնուամենայնիվ, Եվրոպական դատարանի վճիռներում կարելի է գտնել մի քանի ընդհանուր ուղեցույցներ, որոնց օգնությամբ կարելի է պարզել թե արդյոք Կոնվենցիայի 6-րդ հոդվածը տարածվում է այս կամ այն քաղաքացիական գործի վրա թե ոչ: Այդ ուղեցույցները հետևյալն են՝

- Նախ՝ Դատարանը հստակ սահմանել է,<sup>2</sup> որ որոշելիս թե արդյոք տվյալ գործը վերաբերում է քաղաքացիական իրավունքի որոշմանը թե ոչ, այն հաշվի է առնելու միայն խնդրո առարկա իրավունքի բնույթը և այս առումով նշանակություն չունի, թե պետության ներսում այդ իրավունքը օրենսդրության որ ճյուղով է (քաղաքացիական, տնտեսական թե վարչական) կարգավորվում: Դատարանի համար որոշիչ չէ նաև թե ինչպես է տվյալ իրավունքը բնութագրված ներպետական օրենսդրությամբ:
- Որպեսզի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի լինի, անհրաժեշտ է, որ տվյալ քաղաքացիական իրավունքը կամ պարտականությունը նախատեսված լինի ներպետական օրենսդրությամբ:
- Որոշելիս թե 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է թե ոչ, Դատարանի համար ամենակարևոր հանգամանքը հանդիսանում է այն, թե արդյոք տվյալ վարույթի արդյունքը որոշիչ է եղել մասնավոր իրավունքով նախատեսված որևէ իրավունքի կամ պարտականության համար:<sup>3</sup>
- Որպեսզի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի լինի, անհրաժեշտ է նաև, որ առկա լինի վեճ: Ստորև թվարկված գործերում Դատարանը գտել է, որ այդ գործերում որոշվում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ և հետևաբար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է, օրինակ այն դեպքերում՝
  - ա) երբ գործը վերաբերել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքին, օրինակ՝ ռեստորանին ալկոհոլային խմիչքների վաճառելու լիցենզիայից զրկելուն (*Տրակտյորերն ընդդեմ Շվեդիայի*), բժշկական կլինիկայի գործունեության լիցենզիային (Կյոնիգ ընդդեմ Գերմանիայի ֆեդերատիվ հանրապետության), մասնավոր դպրոց ունենալու թույլտվությանը (*Ջորդեբրո Ֆոնդն ընդդեմ Շվեդիայի*),
  - բ) երբ գործը վերաբերվում է անձի կողմից մեկ այլ անձի բարի համբավի իրավունքի հարգմանը (*Ֆայեդն ընդդեմ Միացյալ Թագավորության*):

Ստորև թվարկված գործերում Դատարանը գտել է, որ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ չեն որոշվում և հետևաբար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի չէ օրինակ երբ գործը վերաբերվում է՝

- ա) հարկային պարտավորություններին (*X-ն ընդդեմ Ֆրանսիայի*),
- բ) քաղաքացիություն շնորհելուն և ներգաղթի հարցերին (*Պ-ն ընդդեմ Միացյալ Թագավորության*),
- գ) զինապարտությանը (*Նիկոլուսսին ընդդեմ Ավստրիայի*):

Այսպիսով, երբ վերը թվարկված չափանիշների համապատասխան հաստատվում է, որ տվյալ գործում որոշվում են անձի քաղաքացիական իրավունքներն ու

---

2 Stl'u Konig v Federal Republic of Germany Ringeisen գործով Եվրոպական դատարանի վճիռը, հունիս 28, 1978, կետ 90:  
3 Stl'u H v France գործով Եվրոպական դատարանի վճիռը, 24 հոկտեմբեր 1989, կետ 47:

պարտականությունները, ապա ծագում է պետության պարտավորությունը ապահովելու տվյալ մարդու համար Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված բոլոր իրավունքները:

## **2. Արդար դատաքննության իրավունքն ու սեփականության պաշտպանության իրավունքը**

Հոդված 6-- Արդար դատաքննության իրավունք

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է՝

*Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, կամ իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննարկման դեպքում, իրավունք ունի գործի արդարացի հրապարակային դատաքննության՝ ողջամիտ ժամկետում, օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից: Դատավճիռը հայտարարվում է հրապարակայնորեն, սակայն մամուլի ներկայացուցիչներին եւ հանրությանը կարող են թույլ չտրվել ներկա լինելու ամբողջ դատաքննությանը կամ նրա մի մասին՝ բարոյականության, հասարակական կարգի կամ ժողովրդական հասարակության մեջ պետական անվտանգության նկատառումներով, եթե դա պահանջվում է անչափահասների շահերի կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանվածության համար, կամ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, խիստ անհրաժեշտ է առանձնահատուկ հանգամանքների դեպքում, երբ հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:*

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված—Սեփականության պաշտպանություն

Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է.

*Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իր գույքից անարգել օգտվելու իրավունք ունի: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից՝ բացառությամբ հանրության շահերի պաշտպանության համար և օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով նախատեսված պայմաններով:*

*Վերոնշյալ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության իրավունքը կիրառել այնպիսի օրենքներ, որոնք այն անհրաժեշտ է համարում սեփականության՝ ընդհանուր շահերին համապատասխան օգտագործման վերահսկողությունն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:*

Առաջին հայացքից այս երկու հոդվածները միմյանց հետ կապված չեն: Առավել ևս, այդ հոդվածները թվում է որևէ կապ չունեն նաև Մրցույթի Դատական գործի հետ:

Միևնույն ժամանակ բոլոր այն գանգատներով, երբ գործը վերաբերում մասնավոր սուբյեկտի գույքային իրավունքներին վերաբերող նրա օգտին կայացված ներպետական

դատարանի օրինական ուժի մեջ մտած վերջնական վճռի չկատարմանը (ինչը հենց սույն Մրցույթի Գործի էությունն է կայանում) և/կամ ողջամիտ ժամկետներում չկատարմանը, Եվրոպական դատարանն իր վճիռներում միասին է դիտարկում Կոնվենցիայի այս երկու նորմերը: Օրինակ, *Shcherbakov v Ukraine* գործով իր վճռում Դատարանը կրկին ընդգծել է, որ «... իր օգտին կայացված վճռի կատարմանը հասնելու դիմումատուի անկարողությունը Կոնվենցիայի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իր սեփականության խաղաղ օգտագործման իրավունքին միջամտություն է հանդիսանում»<sup>4</sup>:

## **2.1. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիությունը կատարողական վարույթների նկատմամբ ու հիմնական չափանիշները**

Արդար դատաքննության իրավունքը յուրաքանչյուր անձի համար, ում քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններն են որոշվում, ի թիվս այլոց, երաշխավորում է նաև ողջամիտ ժամկետներում դատաքննության իրավունք: Եվրոպական դատարանն իր վճիռներով որոշել է, թե քաղաքացիական գործերով որ «ժամկետներն» են ի նկատի ունեցվում դատաքննության ողջամիտ տևողությունը գնահատելիս: Այսպես, *Bottazzi v Italy* գործով<sup>5</sup> իր վճռում Դատարանը վերահաստատել է արդարադատությունն առանց դրա արդյունավետությունը և վարկանիշը վնասող ձգձգումների իրականացման կարևորությունը: Եվ այսպես, 6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակներից է նաև դիմումատուին հոգեկան ծանր վիճակի և անորոշության մեջ երկար գտնվելուց զերծ պահելը:<sup>6</sup>

Իր մի շարք վճիռներում Դատարանն ուղղակիորեն է հիշատակում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռների կատարումը՝ որպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով դատաքննության «ողջամիտ ժամկետների» լույսի ներքո դիտարկման ենթակա ժամանակահատված:<sup>7</sup>

Իսկ *Hornsby v Greece* գործով վճռում Դատարանը նշում է, որ դատարանի մատչելիության իրավունքը «... վերացական բնույթ կկրի, եթե Բարձր պայմանավորվող կողմ պետության ներպետական իրավական համակարգը թույլ տա, որպեսզի վերջնական դատական վճիռը մնա անկատար՝ ի վնաս կողմերից մեկին: Անըմբռնելի կլինեն, եթե 6-րդ հոդվածը մանրամասն կերպով սահմաներ կողմերի դատավարական երաշխիքները՝ որ վարույթները լինեն արդար, հրապարակային և արագ, առանց պաշտպանելու դատական ակտերի կատարումը»:<sup>8</sup>

Չետևաբար Եվրոպական դատարանն ուղղակիորեն սահմանել է, որ դատական ակտերի կատարողական վարույթները 6-րդ հոդվածի իմաստով «դատաքննության» բաղկացուցիչ մասն են հանդիսանում:<sup>9</sup>

4 Տե՛ս *Shcherbakov v Ukraine* գործով, թիվ 75786/01, Եվրոպական դատարանի վճիռը, կետ 33:

5 Տե՛ս *Bottazzi v Italy* գործով, թիվ 34884/97, Եվրոպական դատարանի վճիռը, կետ 22:

6 Տե՛ս *Jacobs and White*, *The European Convention on Human Rights*, Fourth Edition, Oxford University Press 2006, էջ 188:

7 Տե՛ս, օրինակ, *Crowther v UK* գործը, թիվ 43741/00, կետ 24, *Silva Pontes v Portugal*, գործը թիվ 14940/89 կետ 36, *Zappia v Italy* գործը, թիվ 24295/94 կետ 21-26:

8 Տե՛ս *Hornsby v Greece* գործը, թիվ 18357/91, կետ 40:

9 Տե՛ս *Keir Starmer*, *European Human Rights Law*, *The Human Rights Act 1998 and the European Convention on Human rights*, Legal Action Group 1999, էջ 379-380:

## 2.2. Կոնվենցիայի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի կիրառելիությունը ու հիմնական չափանիշները

Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը պատշաճ պաշտպանություն է ապահովում սեփականության իրավունքի համար: Հոդվածը մասնավորապես, պետական իշխանություններին լայն հայեցողությամբ է օժտում այդ իրավունքի իրականացմանը միջամտելու հարցում. այն թույլ՝ տալիս անձին սեփականությունից զրկել այն դեպքերում երբ «դա իրականացվում է ի շահ հանրության», իսկ երկրորդ մասը պետությանը թույլ է տալիս կիրառելու «այնպիսի օրենքներ, որոնք նա անհրաժեշտ է համարում» հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:<sup>10</sup>

Կոնվենցիայի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի լույսի ներքո այս դատախաղմրցույթի Գործի հանգամանքները վերլուծելիս պետք է ուշադրություն դարձնել երկու կարևոր հանգամանքի վրա.

ա) արդյոք աշխատավարձը հանդիսանում է «սեփականություն» Կոնվենցիայի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով,

բ) Արդյոք սույն Մրցույթի Գործի հանգամանքները հիմք չեն տալիս ենթադրելու, որ գործ ունենք պետության կամ պետական մարմինների կողմից անձին սեփականությունից զրկելու հետ:

Ինչ վերաբերում է առաջին հարցին, ապա այն որ «աշխատավարձը» Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով սեփականություն է հանդիսանում, Եվրոպական դատարանը բազմիցս ընդգծել է իր վճիռներում:<sup>11</sup> Կոնվենցիայի Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով պետության վրա պոզիտիվ պարտավորություններ են դրվում, որոնք պահանջում են նրանցից պաշտպանելու սեփականության իրավունքը նույնիսկ այն վեճերում, որի կողմեր են հանդիսանում ֆիզիկական անձինք և կազմակերպությունները:<sup>12</sup>

Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, ապա այս կապակցությամբ Եվրոպական դատարանն իր վճիռներում բազմիցս անրագրել է, որ «...պետությունների վրա պարտականություն է դրված նախատեսել դատավարական ընթացակարգեր, որոնք բավարար դատավարական երաշխիքներ կապահովեն և հետևաբար հնարավորություն կտան ներպետական դատարաններին և տրիբունալներին արդյունավետորեն և արդարացիորեն քննելու և լուծել մասնավոր անձանց միջև ծագած ցանկացած վեճ»:<sup>13</sup>

Հետևաբար սույն Մրցույթի կոնտեքստում Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը դիտարկվելու է մասնավոր անձանց՝ դիմումատուի և գործատուի միջև ծագած վեճի լուծման հետ կապված պետության *պոզիտիվ պարտավորության* լույսի ներքո: Իսկ ինչպես վերը նշվեց, «վեճի լուծում» ասելով, Կոնվենցիայի իմաստով նկատի ենք ունենում ինչպես դատաքննության գործընթացն ինքնին, այնպես էլ դատական ակտի կատարողական վարույթը:

10 St' u Philip Leach, Taking Cases to the European Court of Human Rights, Second Edition, Oxford University Press 2005, էջ 354:

11 St' u , օրինակ, Sharko v Ukraine գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 72686/01 և այլն:

12 St' u նույն տեղում:

13 St' u Sovtransvto Holding v Ukraine գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 48553/99, 25.9.02, (2004) 38 EHRR, 44, կետ 96:

### 2.3. Պետությունների վրա դրված պոզիտիվ պարտավորությունների թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում

Կոնվենցիայով երաշխավորվող իրավունքները կիրառելիս պետության վրա դրվում է *պոզիտիվ (դրական) պարտավորություն*: Կոնվենցիայի 1-ին հոդվածը պետություններին պարտավորեցնում է իրենց իրավագրության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովել Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները, ինչը ենթադրում է պոզիտիվ պարտավորությունների կատարում Կոնվենցիան վավերացրած յուրաքանչյուր անդամ պետության համար: Միաժամանակ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը սահմանում է, որ Կոնվենցիան խախտելու համար պետք է տրամադրել ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ: Դատարանն ընդհանուր առմամբ հինգ *պոզիտիվ պարտավորություն* է սահմանել, որոնք ենթակա են կատարման անդամ պետությունների կողմից Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության համար: Ընդ որում Կոնվենցիայով սահմանված իրավունքների ու ազատությունների ապահովումը պետությունների կողմից պետք է լինի գործնականում կիրառելի և արդյունավետ, և ոչ թե տեսական և վերացական<sup>14</sup>: Այդ պարտավորություններն են.

- ա. Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանությունն ապահովող օրենսդրության ընդունման պարտավորություն,
- բ. Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտումները կանխելու պարտավորություն,
- գ. Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտումների առնչությամբ համապատասխան խորհրդատվություն և տեղեկություններ տրամադրելու պարտավորություն,
- դ. Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտումներին արձագանքելու պարտավորություն,
- ե. Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտումները կանխելու նպատակով մարդկանց համապատասխան ռեսուրսներ տրամադրելու պարտավորություն:<sup>15</sup>

Վերը թվարկված բոլոր պոզիտիվ պարտավորություններն էլ կարող են վերաբերել Կոնվենցիային թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Մրցույթի դատական գործի նկատմամբ մասնավորապես կիրառելի է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների խախտումները կանխելու պարտավորությունը:

### **3. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք**

Հոդված 13-- Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

*Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել էն ի պաշտոնե գործող անձինք:*

Կոնվենցիայի 13-րդ հոդվածը չի սահմանում կոնկրետ իրավունքներ կամ ազատություններ, այլ այն ապահովում է անդամ պետությունների կողմից իրավական

<sup>14</sup> St' u Artico v Italy գործով Եվրոպական դատարանի վճիռը (1981) 3 EHRR 1:

<sup>15</sup> Keir Starmer, European Human Rights Law, The Human Rights Act 1998 and the European Convention on Human Rights, Legal Action Group 1999, էջ 196:

պաշտպանության արդյունավետ միջոցների առկայությունը կոնվենցիայով սահմանված այլ իրավունքներն ու ազատությունները խախտվելու դեպքում: Հոդված 13-ը լրացնում է Կոնվենցիայի 1-ին հոդվածին, որը սահմանում է. «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի 1-ին բաժնում»: Հոդված 13-ի բովանդակությունից պարզ է դառնում, որ այն «ուղղակիորեն սահմանում է պետության պարտավորությունը պաշտպանելու մարդու իրավունքներն առաջին հերթին իր իսկ ներպետական իրավական համակարգում»<sup>16</sup> և Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների պաշտպանության պարտավորությունը նախ և առաջ դրված է կոնվենցիայի անդամ պետության վրա: Ավելին, պետություն կողմից տրամադրվող իրավական պաշտպանության միջոցները պետք է լինեն «արդյունավետ» ինչպես գործնականում այնպես էլ օրենքով, մասնավորապես այն իմաստով, որ այս իրավունքի իրականացումը չպետք է անհիմն կերպով սահմանափակվի պատասխանող պետության իշխանությունների գործողություններով կամ անգործությամբ:<sup>17</sup>

Իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը պարզելու համար Եվրոպական դատարանը հստակ մեխանիզմներ է մշակել, որոնք առաջին հերթին ուղղված են բացահայտելու իրավական պաշտպանության միջոցի «արդյունավետ» լինելու և «իրավունքը խախտող ի պաշտոնե գործող անձի» ներքին օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության պատշաճ սուբյեկտ լինելու հանգամանքները:

Եվրոպական դատարանի վճիռների ուսումնասիրությունը վկայում է, որ Դատարանի կողմից 13-րդ հոդվածին առնչվող գործերի ուսումնասիրության հարցերում չկա միասնական մոտեցում և կոնվենցիայի անդամ պետությունները ունեն լայն հայեցողություն իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգման նպատակով հոդված 13-ով ամրագրված իրավական պաշտպանության միջոցի սահմանման և կիրառման առումով<sup>18</sup>:

16 *Sti`u Kudla V Poland* գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 30210/96, 26.10.00, կետ 152:

17 *Sti`u Aksoy v Turkey* գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 21987/93, 18.12.96, (1997) 23 EHRR 553, կետ 95: *Sti`u, Yasli Hasan and Chaush v Bulgaria* գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 30985/96, 26.10.00, (2002) 34 EHRR 55, կետ 101:

18 *Sti`u Ղայան ընդդեմ Թուրքիայի* գործով Եվրոպական դատարանի 1998թ. վճիռը, կետ 106:

### **ՄԱՍ III. ԿՈՂՄԵՐԻ ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Իրավական վերլուծությունը բաժանված է չորս բաժինների, որոնք անդրադառնում են Դատական գործի V գլխում դիմումատուի, այնպես էլ պատասխանող մասնակից պետության համար սահմանված հարցերին: Իրավական վերլուծություն մասում համառոտ անդրադարձ կկատարվի նշված հարցերի վերաբերյալ Եվրոպական Դատարանի նշակած չափանիշներին և դիմումատուի և Մրցույթի դատական գործով «Դիմումատու» և «Պատասխանող մասնակից պետություն» կողմերը ներկայացնող թիմերի կողմից կողմից նշված հարցերի կապակցությամբ կատարվելիք հավանական փաստարկներին և հիմնավորումներին:

Դատավորներին խորհուրդ է տրվում չսահմանափակվել սույն մասում տրված վերլուծություններով և ուսումնասիրել նաև սույն Հուշագրի III բաժնում Կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածների և Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի վերաբերյալ վերլուծությունը:

**ա) Դիմումատուն խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի որ.**

**Սույն գանգատի նկատմամբ կիրառելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը**

Հաշվի առնելով այն փաստը, որ Դատարանը մինչ այժմ չի տվել «քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ» հասկացության որևէ սահմանում՝ նախընտրելով վճիռ կայացնել յուրաքանչյուր առանձին գործի հանգամանքները հաշվի առնելով, «դիմումատու» կողմը ներկայացվող թիմը խնդիրն է ապացուցել, որ Գործով վիճարկվող իրավունքները քաղաքացիական իրավունքներն են: Դա ապացուցելու համար դիմումատուն պետք է առաջնորդվի սույն Հուշագրի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված չափանիշներով ապացուցելու համար վիճարկվող իրավունքների քաղաքացիական լինելու փաստը:

Դիմումատուի համար այս հանգամանքը հույժ կարևոր է քանի որ միայն այն դեպքում երբ Դատարանը կգտնի, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի է, նա իրավունք կունենա օգտվել 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդար դատաքննության իրավունքից:

**Հայաստանի Հանրապետության կառավարությունը խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի որ.**

**Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի չէ սույն գանգատի նկատմամբ:**

Գործով «Պատասխանող պետություն» կողմը ներկայացնող թիմը, հակառակը պետք է ապացուցի, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի չէ, քանի որ Գործով վիճարկվող իրավունքները քաղաքացիական չեն: Դա անելու համար թիմը պետք է հերքի այն, որ վիճարկվող իրավունքները համապատասխանում են սույն Հուշագրի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված չափանիշներին և հետևաբար չեն հանդիսանում քաղաքացիական իրավունքներ:

Պատասխանող պետության համար այս հանգամանքը կարևոր է, քանի որ եթե Դատարանը գտնի, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի չէ, Դիմումատուն կգրկվի իրավունքից վիճարկել, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իր արդար դատաքննությանը իրավունքը:

**բ) Դիմումատուն խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի որ.**

ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 5-ի դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրեն պատշաճ կարգով չժամուցելը, ինչի արդյունքում ինքը զրկվել է նշված դատական նիստին մասնակցելու հնարավորությունից, խախտում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իր արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես կողմերի հավասարության սկզբունքը:

Փաստորեն, եթե Դիմումատուի պնդումները ճիշտ են և նա պատշաճ կարգով տեղյակ չի պահվել Վերաքննիչ դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 5-ի նիստի ժամանակի և վայրի մասին ապա նա իսկապես զրկվել է նշված դատական նիստին ներկա գտնվելու հնարավորությունից և հետևաբար հնարավորություն չի ունեցել ներկայացնել իր գործը և եթե հաստատվում է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի է, ապա ակնհայտ է, որ խախտվել է Դիմումատուի նույն հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքը:

Մասնավորապես՝ Դատարանը իր վճիռներում սահմանել է, որ ինչպես քրեական գործերում այնպես էլ այն գործերում երբ որոշվում են անձի քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները անձի օգտվում են կողմերի հավասարության սկզբունքից, ինչը նվազագույնը ներառում է՝ կողմերից յուրաքանչյուրին հավասար հնարավորության ընձեռում ներկայացնելու իր գործը (ներառյալ իր ապացույցները), այնպիսի պայմաններում, որ նրան չդրվի ավելի անբարենպաստ պայմաններում համեմատած մյուս կողմի հետ:<sup>19</sup>

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդար դատաքննության իրավունքի մաս է կազմում նաև այն, որ յուրաքանչյուր ոք երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ունի *մրցակցային դատաքննության* իրավունքը, ինչի ապահովման համար ամենաքիչը հարկավոր է, որպեսզի երկու կողմերն էլ ներկա լինեն դատական նիստին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի որ.

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված Դիմումատուի արդար դատաքննության իրավունքի (կողմերի հավասարության սկզբունքի) խախտում առկա չէ, և որ դիմումատուն պատշաճ կարգով ծանուցված է եղել ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից 2005 թվականի դեկտեմբերի 5-ի դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

Ինչպես վերը նշվեց՝ եթե Դատարանը գտնի, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի է սույն գործի նկատմամբ ապա Կառավարության համար շատ դժվար կլինի խուսափել 6-րդ հոդվածի խախտման արձանագրումից, քանի որ Վերաքննիչ դատարանի 2005 թվականի դեկտեմբերի 5-ի նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ կարգով տեղյակ չպահվելու պայմաններում Դիմումատուն զրկվել է եղել դատական նիստին ներկա գտնվելու հնարավորությունից և հնարավորություն չի ունեցել ներկայացնել իր գործը: Սույն գործի պայմաններում Դիմումատուի նիստին ներկա չգտնվելու հանգամանքը կարող է արդարացված համարվել միայն այն դեպքում, եթե Կառավարությունը կարողանա ապացուցել Դատարանին, որ *բարեխղճորեն արել է իրենից կախված ամեն ինչ* Դիմումատուին նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ տեղյակ պահելու ուղղությամբ, սակայն դա նրան չի հաջողվել:<sup>20</sup>

19 St' u Dombó Beheer BV v the Netherlands գործով Եվրոպական դատարանի վճիռը, 27 հոկտեմբեր 1993:

20 St' u Colozza v Italy գործով Եվրոպական դատարանի վճիռը, 22 հունվար 1985:

գ) Դիմումատուին խնդրում է, որ Սարգու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի որ.

ԴԱՅԿ ծառայության կողմից 2005 թվականի հոկտեմբերի 25-ին առաջին ատյանի դատարանի՝ իր նկատմամբ կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռը չկատարելը, խախտում է Սարգու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իր արդար դատաքննության իրավունքը, որը հանգեցնում է թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված իր սեփականության խաղաղ օգտագործման իրավունքի խախտմանը:

Դիմումատուի պնդումների հիմնական առանցքը հանդիսանում են հենց վերը թվարկված ընդհանուր սկզբունքները: Սույն դատախաղ-մրցույթի գործի՝ դիմումատուին «վերաբերող» հանգամանքները բավականին պարզ են. նա ունի իր օգտին կայացված և օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որը չի կատարվել: Այսինքն, եթե փորձենք ընդհանրացնել, ապա ենթադրվում է, որ դիմումատուն՝

- նախ պետք է հիմնավորի, որ աշխատավարձը, որպես ՀՀ ներպետական օրենսդրությամբ բնորոշված գույքային իրավունք, Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով հանդիսանում է «սեփականություն» և պաշտպանվում է այդ հոդվածով,
- պետք է հիմնավորի, որ դատական ակտերի կատարողական վարույթների նկատմամբ կիրառելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը,
- պետք է ցույց տա դատական ակտերի կատարողական վարույթների կոնտեքստում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի միջև առկա կապը: Այսինքն, որ դատական ակտի չկատարումը, թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի միջամտություն է հանդիսանում, և ի վերջո տրամաբանական եզրահանգման հանգի, որ իր օգտին կայացված դատական ակտի չկատարման արդյունքում խախտվել է թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը:

Դիմումատուի հիմնական խնդիրը իր օգտին կայացված դատական ակտի կատարողական վարույթների տեսանկյունից Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտումը հիմնավորելու մեջ է կայանում, քանի որ հակառակ դեպքում թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում չի կարող լինել:

Եվրոպական դատարանն իր վճիռներում սահմանել է, որ «...Պետության պատասխանատվությունը մասնավոր կազմակերպության դեմ կայացված դատավճռի կատարման հարցում սահմանափակվում է դատավճռի կատարման ընթացակարգով:»<sup>21</sup> Այսինքն պետության պատասխանատվությունը սահմանափակվում է միայն հարկադիր կատարման ծառայության կողմից կատարողական վարույթն օրենքով սահմանված կարգով իրականացնելն ապահովելով, և կատարողական վարույթի արդյունքը այստեղ որոշիչ նշանակություն չունի:

Հետևաբար, դիմումատուի համար օգտակար կլինի նաև անդրադառնալ դատական ակտերի հարկադիր կատարման ընթացակարգը կարգավորող ՀՀ օրենքներին, մասնավորապես «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին, որպեսզի գործի հանգամանքների լույսի ներքո փորձի հիմնավորել, որ պետական մարմինները, ու մասնավորապես դատական հարկադիր կատարման ծառայությունը չեն ձեռնարկել օրենքի սահմաններում բոլոր ողջամիտ քայլերը իր օգտին կայացված դատական ակտը պատշաճ կատարելու համար: Եվս մեկ անգամ նշենք, որ այստեղ արդեն կարևոր է դառնում գործի հանգամանքները մեկնաբանելու դիմումատուի կարողությունը, ով կկարողանա դրանք՝ օրենսդրության տեսանկյունից ներկայացնելու իր օգտին:

21 Stî'u, օրինակ, Shestakov v. Russia գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 48757/99, The Law:

Մյուս կողմից դիմումատուի համար սա պարտադիր չէ անել իր հիմնական պնդումներում, սակայն պետք է պատրաստ լինել այս առումով, քանի որ պատասխանող Կառավարությունն արդեն ստիպված է գործը դիտարկել այս տեսանկյունից, և հնարավոր է որ դիմումատուն կարիք ունենա պատասխան պնդումներում արդեն անդրադառնալ այս հարցերին:

Այս առումով, դատավորը ևս կարող է դեռ դիմումատուի հիմնական պնդումների ընթացքում փորձել պարզաբանել այս հարցը:

Սույն Մրցույթի Գործի հանգամանքներից երևում է, որ կատարողական վարույթները ավարտվելու հիմքը հանդիսացել է գործատուի՝ մասնավոր ընկերության գույքի ու ֆինանսների բացակայությունը: Այս առումով Դատարանի համար պետք է որ հետաքրքիր լինի նաև դիմումատուի կարծիքն ու մոտեցումը հասկանալ այն հարցի կապակցությամբ, թե արդյոք պետությունը պատասխանատու է մասնավոր ընկերության ֆինանսական միջոցների անբավարարության համար: Նույն հարցը խորհուրդ է տրվում նաև քննարկել պատասխանող կառավարության հետ, և այդ կապակցությամբ այս խնդրին ավելի մանրամասն կանդրադառնանք պատասխանող կառավարության պնդումներին վերաբերող մասում՝ ստորև:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի որ.

ԴԱՀԿ ծառայության կողմից դիմումատուի նկատմամբ 2005 թվականի հոկտեմբերի 25-ին առաջին ատյանի դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռը չկատարելու առումով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության, եվ թիվ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորված սեփականության խաղաղ օգտագործման դիմումատուի իրավունքների խախտում առկա չէ:

Կառավարությունը հնարավորություն ունի իր պնդումը հիմնավորել մի շարք փաստարկներով, և այս առումով թվարկենք մի շարք չափանիշներ, որոնք սահմանել է եվրոպական դատարանն իր վճիռներում կապված այս հարցերի հետ.

- Եվրոպական դատարանը Բալյուկն ընդդեմ Ուկրաինայի գործով<sup>22</sup> նշել է, որ եթե վճռի չկատարումը պայմանավորված է մասնավոր անձ հանդիսացող պարտապանի միջոցների բացակայությամբ, ապա պետությունը պատասխանատվություն չի կրում այդ միջոցի բացակայության համար:
- Իր մեկ այլ վճռում Դատարանը սահմանել է, որ «... չի կարելի մեկնաբանել դատավճիռների ի կատար ածելու վերաբերյալ սկզբունքը որպես պահանջ Կառավարությանը անհատ պատասխանողին իրենով փոխարինելու ...»:<sup>23</sup>
- Shestakov-ի գործով իր վճռում<sup>24</sup> Դատարանը սահմանել է, որ «...Պետության պատասխանատվությունը մասնավոր կազմակերպության դեմ կայացված դատավճռի կատարման հարցում սահմանափակվում է դատավճռի կատարման ընթացակարգով: Պետության պատասխանատվությունը դադարում է այն պահից, երբ կատարողական վարույթներն ավարտվել են ներպետական օրենքով սահմանված կարգով:
- Կառավարությունը կարող է վկայակոչել նաև Burdov-ի գործով եվրոպական դատարանի վճիռը, որտեղ դատարանը դատական ակտի չկատարման հիմքով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում արձանագրեց հիմք ընդունելով այն, որ պատասխանող պետության

22 St`u Leonid Ivanovich BALYUK v Ukraine գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 17696/02

23 St`u Bobrova v. Russia գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 24654/03 կետ 16:

24 St`u Shestakov v. Russia գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 48757/99, The Law:

իշխանությունները տարիներ շարունակ անհրաժեշտ միջոցներ ձեռք չէին առել դատարանի վճիռը կատարելու համար:<sup>25</sup>

Եթե ընդհանրացնենք, վերն ասվածը, ապա պատասխանող կառավարությունը, հիմնվելով Եվրոպական դատարանի վճիռների վրա, նախ պետք է փորձի հիմնավորել, որ տվյալ դեպքում դիմումատուի օգտին կայացված դատական ակտի չկատարումը հետևանք է միայն մասնավոր առևտրային ընկերության գույքի ու ֆինանսական միջոցների անբավարարության: Իսկ այս պարագայում, պետությունը պատասխանատու չի կարող համարվել այդ անբավարարության համար և որ ընդհանրապես պետությունը պատասխանատվություն չի կրում իրավաբանական անձանց պարտավորությունների համար:<sup>26</sup>

Կառավարությունը որպես տրամաբանական շարունակություն, պետք է փորձի հիմնավորել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կատարել է իր պոզիտիվ պարտավորությունները, և մասնավորապես ինչպես օրենսդրական մակարդակում այնպես էլ գործնականում ստեղծել է պատշաճ մեխանիզմներ դատական ակտերի կատարումն ապահովելու համար:<sup>27</sup>

Կառավարությունը հիմք ընդունելով դատական ակտերի հարկադիր կատարման մասին ներպետական օրենսդրությունը՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը, և դրա դրույթների լույսի ներքո մեկնաբանելով գործի հանգամանքները, պետք է փորձի ապացուցել, որ դիմումատուի նկատմամբ իրականացված կատարողական վարույթները կատարվել են ներպետական օրենսդրության սահմաններում, որ հարկադիր կատարողական ծառայությունը կատարել է օրենքով իրեն վերապահված բոլոր հնարավոր քայլերը վճիռը կատարելու համար, որ չկան որևէ բացթողումներ ներպետական մարմինների գործողություններում<sup>28</sup>: Սրանով պետությունը հնարավորություն ունի ցույց տալ Կոնվենցիայի ենթադրյալ խախտման և իր գործողությունների կամ անգործության միջև պատճառահետևանքային կապի բացակայությունը: Այսինքն, Գործով Պատասխանող պետությունը ներկայացնող թիմը պետք է փորձի ցույց տալ վճռի չկատարման հարցում «պետության մեղքի բացակայությունը», այն որ, ինքը կատարել է Կոնվենցիայի իմաստով իր դրական պարտավորությունները և հետևաբար Կոնվենցիայի խախտում առկա չէ:

Պաշտպանության այսպիսի տարբերակը կարող է արդյունավետ լինել հատկապես այն դեպքում, եթե դիմումատուն իր հիմնական պնդումներում կամ պատասխան պնդումներում չկարողանա ցույց տալ կամ առնվազն կասկածի տակ դնել հարկադիր կատարողի գործողությունների օրինականությունը, կամ մատնացույց անել վերջինիս անգործությունը և օրենքի սահմաններում հնարավոր բոլոր անհրաժեշտ ու ողջամիտ քայլերը չձեռնարկելու փաստերը:

**դ) Դիմումատուն խնդրում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի որ.**

**Հայաստանի Հանրապետությունը խախտել է Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, քանի որ դիմումատուն գործնականում հնարավորություն չի ունեցել հարկադիր կատարողի գործողությունները վիճարկել ներպետական դատարաններում:**

25 St' u Burdov v. Russia գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 59498/00, կետ 37:

26 Այստեղ օգտակար կլինի, եթե պատասխանող կառավարությունը իր պնդումները հիմնավորեր նաև ներպետական համապատասխան օրենքների, օրինակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածներով:

27 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս վերը:

28 Կատարողական վարույթները պատշաճ իրականացված լինելու փաստը հիմնավորելու համար կառավարությունը կարող է վկայակոչել այն, որ այդ հարցը դիմումատուի բողոքի հիման վրա քննարկվել է նաև ներպետական դատարանի կողմից, որը ևս հաստատել է դրանց օրենքով սահմանված կարգով իրականացված և ավարտված լինելու հանգամանքը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը խնդրում է, որ Սարդու իրավունքների եվրոպական դատարանը վճռի և հայտարարի որ.

Հայաստանի Հանրապետությունը չի խախտել Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը, քանի որ դիմումատուն և տեսականում և գործնականում հնարավորություն է ունեցել ներպետական ատյաններում պաշտպանելու իր իրավունքները:

Այս երկու հարցապնդումներին առավել նպատակահարմար է անդրադառնալ միասին: Այս երկու պնդումների առանձնահատկությունը պայմանավորված է դրանց հիմքը հանդիսացող փաստական հանգամանքներով: Մասնավորապես, դրանց հիմքում ընկած է այն, որ դիմումատուն հարկադիր կատարողի գործողությունները ցանկացել է դատական կարգով վիճարկել: Սակայն սկսած վերաքննիչ ատյանից, չի մուծել պետական տուրքը ինչի արդյունքում վերաքննիչ ու վճռաբեկ ատյանները նրա գործը չեն քննել:

Առավել տրամաբանական կլիներ, որ այս դեպքում վիճարկվեր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի խախտված լինելու հանգամանքը, սակայն ընտրվել է այնուամենայնիվ 13-րդ հոդվածը մի շարք նկատառումներով. նախ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին արդեն անդրադառնում ենք և մասնակիցների համար ուսուցողական կլիներ նաև ուսումնասիրել Կոնվենցիայի 13-րդ հոդվածը: Բացի դրանից լուրջ նշանակություն ունի նաև կիրառելիության այն կանոնները որոնք գործում են Կոնվենցիայի 13-րդ հոդվածի կապակցությամբ:

Սույն գործի հանգամանքներում, երբ խոսքը գնում է պետական տուրքը չվճարելու հիմքով գործը դատարանի կողմից չքննելու մասին, իսկապես առավել կիրառելի է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, որն ի թիվս այլոց սահմանում է նաև դատարանի մատչելիության իրավունքը: Սակայն այս հարցը Եվրոպական դատարանի նախադեպով արդեն հստակ սկզբունքներով է լուծվում: Դատարանն իր նախորդ վճիռներում<sup>29</sup> արդեն անդրադարձել է պետական տուրքերի հարցին և դրա առնչությանը դատարանի մատչելիության իրավունքին: Ընդհանուր առմամբ այդ հարաբերությունը հանգեցվում է տուրքի չափի «մեծ» կամ «փոքր» և դիմումատու վճարունակ կամ անվճարունակ լինելուն, ինչի հիման վրա էլ Դատարանը որոշում է թե արդյոք առկա է Կոնվենցիայի խախտում թե ոչ:

Սույն Դատախաղ-մրցույթի նպատակներից ելնելով մասնակիցներին պետական տուրքի չափի և «դիմումատուի» վճարունակության խնդրի լուծման առաջադրանք տալը արդյունավետ չէ զուտ ուսուցողական տեսանկյունից:

Այս առումով ընտրվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի վիճարկման տարբերակը: Սա մի կողմից հնարավորություն է տալու մասնակիցներին խորությամբ ուսումնասիրելու այդ հոդվածը, միաժամանակ հասկանալու թե ինչու այն կարող է կիրառելի չլինել տվյալ գործում, և ինչու այդ դեպքում պետք է կիրառվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը:

Այսպես, Կոնվենցիայի 13-րդ հոդվածը սահմանում է, «Յուրաքանչյուր ոք ու սույն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները խախտվում են ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Դիմումատուն այս կապակցությամբ պետք է պնդի, որ համաձայն Եվրոպական դատարանի վճիռների, չնայած հոդվածի ձևակերպմանը, հոդված 13-ի խախտումը հաստատելու համար պարտադիր չէ Կոնվենցիայի որևէ այլ հոդվածի խախտում<sup>30</sup>: Դատարանը չի բնորոշել թե ինչ նկատի ունի «խախտման հնարավոր առկայություն» հասկացության տակ, սակայն իր կայացրած մի շարք վճիռներում նշել է, որ խախտման

29 Ի թիվս այլոց տե՛ս, օրինակ, Kreuz v Poland գործով Եվրոպական դատարանի վճիռը, No. 28249/95:

30 Stı՛u, օրինակ, Klass and others v Germany, գործով Եվրոպական դատարանի վճիռը:

առկայությունը որոշվում է կոնկրետ գործով վեր հանված իրավական հարցերի բնույթի և գործի փաստերի լույսի ներքո:<sup>31</sup>

### Դիմումատուի հնարավոր փաստարկները.

Դիմումատուն պետք է շարունակի նրանով որ ներկայացնի ու պնդի 13-րդ հոդվածով նախատեսված մյուս սկզբունքները, որոնք իր կարծիքով չեն պահպանվել սույն գործում. մասնավորապես նա կարող է պնդել, որ.

ա) 13-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր անձի համար, ով պնդում է, որ իր իրավունքները խախտվել են, ներպետական մարմինների առջև երաշխավորված լինի դրանք վերականգնելու հնարավորությունը,<sup>32</sup>

բ) 13-րդ հոդվածը պետությունների վրա պարտավորություն է դնում իրավունքների վերականգնումն ապահովել նախ և առաջ և գլխավորապես ներպետական ատյաններում,<sup>33</sup>

գ) 13-րդ հոդվածը նպատակ ունի հնարավորություն տալ անհատներին իրենց իրավունքները վերականգնել ներպետական ատյաններում նախքան Կոնվենցիոն մեխանիզմներին դիմելը,

դ) այդ պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն ինչպես գործնականում այնպես էլ տեսականորեն:<sup>34</sup>

Դիմումատուի առաջնահերթ խնդիրը լինելու է 13-րդ հոդվածը որպես առանձին նորմ վիճարկումը:

### Պատասխանող պետության հնարավոր փաստարկները.

Կառավարությունը կարող է օրինակ պնդել, որ 13-րդ հոդվածով երաշխավորվող պաշտպանության միջոցը պարտադիր չէ որ երաշխավորի դիմումատուի հաջողությունը: Այսինքն հոդվածը երաշխավորում է միայն այդպիսի արդյունավետ միջոցի առկայությունը, սակայն չի երաշխավորում որ այն պարտադիր պետք է հանգեցներ նրան, որ դիմումատուն հաղթի իր գործը դատարանում կամ համապատասխան այլ մարմնի առջև:

Սակայն այս պնդումից հետո, եթե Կառավարությունը ճիշտ ուղղությամբ տանի իր պաշտպանությունը ապա պարտադիր կերպով հանգելու է նրան որ ստիպված է լինելու հիմնավորել դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքը խախտված չլինելու հանգամանքը: Իսկ այդ իրավունքն արդեն սահմանված է 6-րդ հոդվածի 1-ին կետով: Այստեղ արդեն Կառավարությունը նորից պետք է հիմնվի դատարանի նախորդ վճիռների վրա մասնավորապես պնդելով.

- 6-րդ հոդվածի 1-ին մասը հանդիսանում է *lex specialis* 13-րդ հոդվածի նկատմամբ: Այսինքն, այն դեպքերում երբ Դատարանը քննում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը, ապա 13-րդ հոդվածին չի անդրադառնում: Բացառություն է կազմում միայն այն դեպքը, երբ խոսքը գնում է դիմումատուի կողմից դատավարության ողջամիտ տևողության հանգամանքը վիճարկելու մասին և այս դեպքում դատարանը կարող է առանձին քննել նաև 13-րդ հոդվածը:
- մնացած դեպքերում և այդ թվում նաև դատարանի մատչելիության իրավունքի դեպքում կիրառվում է 6-րդ հոդվածի 1-ին մասը.<sup>35</sup>

31 *Sti'u Boyle and Rice v UK* գործով Եվրոպական դատարանի վճիռը, թիվ 9659/82 և թիվ 9658/82, Շարք Ա, թիվ 131, 27.4.88, (1998) 10 EHRR 425, կետ 55:

32 *Sti'u օրինակ Klass and others v Germany*, գործով Եվրոպական դատարանի վճիռը:

33 *Sti'u օրինակ Kudla v Poland* գործով Եվրոպական դատարանի վճիռը, No. 30210/96:

34 *Sti'u*, օրինակ *Aksoy v Turkey* գործով Եվրոպական դատարանի վճիռը, No. 21987/93:

35 Այս ամենի մասին տե՛ս *Kudla v Poland* գործով Եվրոպական դատարանի վճիռը, No. 30210/96:

Եվ այսպես, եթե ընդհանրացնենք երկու կողմերի պնդումների հնարավոր տարբերակները ապա կստանանք հետևյալը.

- դիմումատուն պետք է փորձի 13-րդ հոդվածը վիճարկել որպես առանձին հոդված այն չկապելով 6-րդ հոդվածի 1-ին մասին հետ և չխոսելով դատարանի մատչելիության իրավունքի մասին:
- Կառավարությունն ընդհակառակը պետք է ամեն ինչ տանի դեպի դատարանի մատչելիության իրավունք հանգեցնելով ի վերջո նրան որ տվյալ դեպքում կիրառելի է միայն 6-րդ հոդվածի 1-ին կետը, որը դիմումատուն չի վիճարկում:

Իրավական առումով առավել հստակ է իհարկե պատասխանող պետության դիրքորոշումը, սակայն երկու կողմերից էլ կպահանջվի Կոնվենցիայի համապատասխան հոդվածների ու դրանց հետ կապված դատարանի նախադեպի ուսումնասիրություն հարցի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու համար: